Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1014-01.06.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 51-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ և 7-րդ կետերով.

«6) միակ այն բնակարանի (այդ թվում՝ բնակարանի հետ մեկ միասնական գույքային միավոր կազմող տնամերձ հողամասի և այդ հողամասի վրա առկա օժանդակ կառույցների) կամ դրա բաժնի, որը պարտապանի համար հանդիսանում է մշտական բնակության միակ վայր և որի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից: Եթե միակ բնակարանն իրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված գումարը գերազանցող գնով, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միակ բնակարանի իրացման համար նախատեսված գումարը վերադարձվում է պարտապանին: Սույն կետով սահմանված դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ գույքը գրավադրված է պահանջատիրոջ պահանջի ապահովման համար, ինչպես նաև երբ բավարարվում են ալիմենտային, կյանքին կամ առողջությանը կամ հանցագործության պատճառված վնասների հատուցման պահանջները.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված միակ բնակարանի իրացման համար նախատեսված գումարը, որը վերադարձվել է պարտապանին»:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կատարողական վարույթների նկատմամբ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո չորս ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անցումային դրույթներ	Նախատեսել համապատասխան կարգավորում օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության կողմից միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումարի սահմանման վերաբերյալ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
ՀՀ կառավարություն	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հոդված 1:	Նկատի ունենալով, որ լոտի մեկնարկային գինը լոտի գնահատված արժեքի 75 %-ն է, իսկ բնակարանը յուրաքանչյուր կրկնակի աճուրդի դրվելու դեպքում նորից չի գնահատվում, այլ նվազեցվում է դրա մեկնարկային գինը, առաջարկվում է սահմանել, որ լոտը հանվում է հարկադիր աճուրդից, եթե կրկնակի աճուրդի *լոտի մեկնարկային գինը* հավասար կամ ցածր է ՀՀ կառավարության կողմից սահմանված	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		միակ բնակարանի իրացման համար նախատեսված գումարից:	